

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համարում հիմնականում զեպրեղված են ակադեմիկոս ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶԻ ՂԱՓԱՆՑՅԱՆԻ ծննդյան 130-ամյակի առթիվ ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կայացած գիտաժողովում կարդացված զեկուցումները

ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԲԱՆ

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գիտության ճանապարհին առաջին իսկ քայլերից Գ. Ղափանցյանի լեզվաբանական որոնումներում ուրվագծվել է երկու հիմնական ուղղություն՝ պատմահամեմատական և ընդհանուր լեզվաբանական: Ի տարբերություն պատմահամեմատական լեզվաբանության (ավելի ստույգ՝ պատմահամեմատական հայերենագիտության), որի հիմնահարցերը ակադեմիկոս Ղափանցյանի միտքը զբաղեցրել են իր ողջ կյանքի ընթացքում, ընդհանուր լեզվաբանության ոլորտում, առնվազն որպես տպագիր խոսք, անվանի գիտնականի հայացքների ամփոփումը եղավ 1939 թ. լույս տեսած «Ընդհանուր լեզվաբանություն» բուհական դասագրքի առաջին հատորը (երկրորդը այդպես էլ չգրվեց): Մինչ այդ՝ 1914-ին իր գիտական գործունեության նախաշեմին, Գ. Ղափանցյանը հրատարակել էր «Լեզվաբանական դիսցիպլիններ և լեզու» ուսումնասիրությունը, իսկ 1937 թ. «Ընդհանուր լեզվաբանության» առաջին երեք մասերը՝ *ներածությունը*, *ընդհանուր մասը* և *հնչյունաբանությունը*:

Հետևաբար, խոսել Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայացքների մասին նույնն է, թե գնահատել նրա «Ընդհանուր լեզվաբանություն» դասագիրքը: Այս գրքի գնահատման յուրաքանչյուր փորձ չի կարող շրջանցել առնվազն երկու հանգամանք. 1) այն լեզվի տեսության առաջին գիտական շարադրանքն է հայ իրականության մեջ, 2) այդ գիրքը գրվել և հրատարակվել է հումանիտար գիտությունների, այդ թվում՝ լեզվաբանության համար ոչ բարենպաստ ժամանակներում: Գ. Ղափանցյանի ապրած ժամանակը, մասնավորապես՝ «Ընդհանուր լեզվաբանության» ստեղծման տարիները, մեղմ ասած, ոչ գիտական գաղափարների տիրապետության ժամանակաշրջան էր: Բավական է միայն ասել, որ Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ստեղծվել է մի շրջանում, երբ խորհրդային լեզվաբանության մեջ

տիրապետող էր Ն. Մառի «նոր ուսմունքը լեզվի մասին»: Քողարկվելով, այսպես կոչված, մարքսիստական շղարշով և այդպիսով ձեռք բերելով պաշտոնականի կարգավիճակ՝ այդ ուսմունքով գիտական աշխարհին պարտադրվում էին, օրինակ, այնպիսի ոչ գիտական գաղափարներ, ինչպիսիք էին լեզվի վերնաշենքային բնույթը, բոլոր լեզուների՝ երևակայական չորս տարրերից՝ SAL, BER, YON, ROՏ, սկիզբ առնելը¹, հնչյունական լեզվի ծնունդը ձեռք-լեզվից կամ ժեստերի լեզվից՝ մոգական-աշխատանքային գործընթացում և այլն:

Յուրաքանչյուր աշխատանք, այդ թվում Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ճիշտ գնահատելու համար այն պիտի դիտարկել իր ժամանակի մեջ: Ինչպես վկայել է հեղինակը, այդ գիրքը գրվել է իր ժամանակի տեսական լեզվաբանության ինչպես ռուսական, այնպես էլ արևմտյան բոլոր կամ գրեթե բոլոր արժեքավոր աշխատությունների հաշվառումով, ի տարբերություն իր որոշ ժամանակակիցների, օր.՝ ակադ. Ի. Մեջանինովի², որոնք ընդհանուր լեզվաբանություն են գրել, փաստորեն, միայն «նոր ուսմունքի» սկզբունքների հիման վրա:

Գ. Ղափանցյան-լեզվաբանի, մասնավորապես՝ լեզվաբանության տեսաբանի հայացքները ձևավորվել են բարեշրջական (Եվոլյուցիոն) բարդ զարգացումների ճանապարհով՝ ներառելով ինչպես երիտքերականական և սոցիոլոգիական ուղղությունների, այնպես էլ «նոր ուսմունքի» որոշ դրույթներ, սակայն չնույնանալով նրանցից և ոչ մեկին: Գ. Ղափանցյանի համալսարանական ուսումնառության տարիներին լեզվաբանության մեջ տիրապետող էին երիտքերականական պատկերացումները, և բնական է, որ այդ տարիների գիտելիքները չէին կարող իրենց հետքը չթողնել նրա գիտական աշխարհայացքի ձևավորման վրա: Մանավանդ որ նրա դասախոսների թվում էր ժամանակի խոշոր լեզվաբաններից Ի. Ա. Բոդուենը՝ Կուրտենեն՝ երիտքերականական ուղղության ամենից ակնառու ներկայացուցիչը Ռուսաստանում: Սակայն որպես գիտնականի՝ նրա ձևավորման սկիզբը զուգադիպեց իր մյուս ուսուցչի՝ Ն. Մառի «հաբեթական», ապա «լեզվի մասին նոր ուսմունքի» տիրապետության փուլին: Երկրորդ դեպքում կարևոր էր հատկապես այն հանգամանքը, որ «նոր ուսմունքին» բացահայտորեն հակադրվելը կարող էր նաև ճակատագրական լինել: Այնպիսի հարցերում, ինչպիսիք էին լեզվի ծագումը, լեզվի և մտածողության փոխհարաբերությունը, ձևի և բովանդակության հարաբերակցությունը լեզվում, լեզուների ծագումնաբանական և ձևաբանական դասակարգումները և այլն, Գ. Ղափանցյանը, ըստ էության, միջին դիրք է գրավում ա-

¹ Տե՛ս Ն. Յա. Մառ, Ընտիր երկերի ժողովածու, Եր., 1949, էջ 17, 139-155:

² Հմմտ. Мещанинов И. И. Общее языкознание, Л., 1940: Ինչպես նշված է այս գրքի ծանուցագրում, այն նվիրված է «բառի և նախադասության մեջ ստադիալության զարգացման հիմնահարցի մշակմանը», (էջ 2):

վանդական (իմա՝ երիտքերականական և սոցիոլոգիական) և *նորուսմունքական* (իմա՝ մառական) պատկերացումների միջև: Դժվար է ասել, թե Գ. Ղափանցյանի կողմից որքանով են անկեղծ վերոհիշյալ հարցերի կապակցությամբ մարքսիզմի դասականների և առհասարակ մարքսիստական լեզվաբանության վկայակոչումները, սակայն ակնհայտ է, որ բոլոր դեպքերում նա փորձել է չընդօրինակել ո՛չ այսպես կոչված, «բուրժուական» լեզվաբանության ներկայացուցիչներին, ո՛չ էլ Ն. Մառին: Վերը հիշված հարցերի առնչությամբ Գ. Ղափանցյանի դատողություններից այնպիսի տպավորություն է առաջանում, որ նա փորձել է գոյություն ունեցող բոլոր, այդ թվում՝ մարքսիզմի դասականների, տեսակետների խելամիտ համադրման ճանապարհով ստեղծել հավասարակշռված լեզվաբանական ուսմունք, որը նա բնորոշում է իբրև *մարքսիստական*:

Գ. Ղափանցյանի ընդհանուր լեզվաբանական հայեցակարգի ամենից խոցելի կողմերը լեզվի ծագման, նրա էության և հասարակական նշանակության հարցադրումներն են, իսկ դա պատահական չէ, որովհետև հենց այդ հարցերում նա պարտադրված էր գոնե առերևույթ լինել մարքսիստ, իսկ ավելի ստույգ՝ «նորուսմունքական»: Եթե լեզվի ծագման հարցում նա հետևում է Ֆ. Էնգելսի առաջ քաշած «աշխատանքային» տեսությանը, ըստ որի՝ լեզուն առաջացել է աշխատանքի ընթացքում՝ հաղորդակցման անհրաժեշտության պահանջով, ապա լեզվի էության ըմբռնման հարցում հիմնականում հետևում է «նոր ուսմունքին» պաշտպանելով նրա վերնաշենքային լինելու տեսակետը: Լեզվի՝ որպես հասարակական երևույթի ըմբռնման տեսանկյունից ընդհանուր առմամբ ընդունելի համարելով Եվրոպայում սոցիոլոգիական ուղղության ներկայացուցիչների (Ֆ. դը Սոսյուր, Ա. Մեյե, Ժ. Վանդրիես), իսկ Ռուսաստանում՝ Ֆ. Ֆորտունատովի և Բոդուեն դը Կուրտենեի հայացքները՝ Գ. Ղափանցյանը, սակայն, նրանց պատկերացումները քննադատում է այն բանի համար, որ դրանցում «լեզվի հասարակայնության բնույթը և ընթացքը չի կապվում հարատևորեն յուր պատվանդանի (բազիսի) հետ. լեզուն չի վերցվում իբրև վերաշենք, վերնաշենքային կուլտուրա»³: Գ. Ղափանցյանը, համահունչ իր ժամանակի ոգուն, պաշտպանում է ապագայի «միասնական միջազգային լեզվի» մասին դրույթը⁴: Ամբողջ մարդկության համար «մի նոր լեզվաձևի» առաջացման անհրաժեշտությունը, ըստ նրա, խարսխված է այն բանի վրա, որ «պատմության զարգացման ընթացքը տանում է դեպի բոլոր ազգերի (ազգալեզուների) կոնֆեդերացիա, համաշխարհային միասնական տնտեսությամբ և գիտակցությամբ» և տարբեր կառուցվածք ունեցող լեզուների ներքին՝ բովանդակային մասը մերձենում է միմյանց (հմմտ. «... տարբեր ձևավոր լեզուների բովանդակական մասը քանի

³ Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. I, Եր., 1939, էջ 6, 20-21:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 7:

զնում ավելի յե մոտենում իրար ... »⁵): Այս դիրքերից քննադատելով, այսպես կոչված, «բուրժուական» լեզվաբանական մտքի ներկայացուցիչներին՝ Գ. Ղափանցյանը, սակայն, վերապահումներ ունի նաև «մարքսիստ-մատերիալիստ» լեզվաբանների առնչությամբ: Վերջիններս, օրինակ, «Ժխտելով նախալեզուները... դեռ չեն բացատրել այն ընդհանրությունները (բառարմատ և ձևեր), որ կան մի շարք «ազգակից» լեզուների միջև»⁶:

Առանձին հարցերում, որոնք հարիր էին մարքսիզմի դասականների պատկերացումներին, տուրք տալով «նոր ուսմունքի» տրամադրություններին, Գ. Ղափանցյանը, այդուհանդերձ, պատկանում էր այն գիտնականների թվին (Ե. Պոլիվանով, Մ. Պետերսոն, Ա. Չիքոբավա, Ա. Ռեֆորմատսկի), որոնք Ն. Մառի տեսությանը վերաբերվում էին վերապահությամբ և հակադրվում էին գիտականորեն քննություն չբռնող հարցադրումներում⁷:

Իր ժամանակի շրջահայաց մտածողների նման Գ. Ղափանցյանը ճիշտ է համարել «խիստ քննադատորեն վերանշակելով վերցնել» այն դրականը, որ ստեղծել էին ««պատմական», «նատուրալիստական», «կուլտուր-պատմական», «երիտքերականական», «հոգեբանական», «սոցիոլոգիական» և այլ դպրոցների»⁸ ներկայացուցիչները: Այդ առողջ մտայնության շնորհիվ ԽՍՀՄ-ում 1930-ական թթ. հրատարակվեցին եվրոպական և ամերիկյան առանձին նշանավոր լեզվաբանների աշխատություններ, որոնք էապես խթանեցին պատմահամեմատական և ընդհանուր լեզվաբանական մտքի զարգացումը⁹: Թեպետ այդ աշխատություններին կցված ներածական խոսքերում գերակշռում էր գաղափարախոսական դիրքերից արվող քննադատությունը, բայց և այնպես դրանց հրատարակությունն իսկ լուրջ առաջքայլ էր դեպի ճշմարիտ գիտությունը¹⁰:

Ավանդական լեզվաբանությունը արժևորելու առումով Գ. Ղա-

⁵ Նույն տեղում, էջ 162:

⁶ Նույն տեղում, էջ 15:

⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Լեզվաբանության պատմություն, II հրատ., Եր., 2015, էջ 482-483:

⁸ Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 6-7:

⁹ Հմմտ. Фердинанд де Соссюр, Курс общей лингвистики, М., 1933, Эдуард Сепир, Язык: введение в изучение речи, М., 1934, Вандриес Ж. Язык: лингвистическое введение в историю, М., 1937, Мейе А. Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.-Л., 1938:

¹⁰ Ա. Սուլտտինը, Է. Մեյլիի «Լեզու» գրքին կցված ներածական խոսքում գաղափարական դիրքերից քննադատելով գրքի հայեցակարգը, նշում է երկու հիմնական արժանիք՝ 1) «Էկզոտիկ», մասնավորապես ամերիկահնդկացիական լեզուների տվյալների լայնորեն ներգրավումը, 2) լեզուների նոր՝ կոնցեպտուալ (հասկացական) տիպաբանական դասակարգումը, որը նոր խոսք էր տիպաբանական դասակարգումների պատմության մեջ (տե՛ս Էդուարդ Սեպիր, նշվ. աշխ., էջ XIV-XVII): Իհարկե, նշված աշխատության արժանիքները նշվածներով չէին սահմանափակվում. իրականում այն նախորդ դարասկզբի տեսական լեզվաբանության մեծարժեք նվաճումներից է և մինչև օրս էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը:

փանցյանի հայացքների համար բնութագրական են, մասնավորապես, հետևյալ նկատառումները:

1) Նա դրական է վերաբերվում լեզուների ծագումնաբանական դասակարգմանը (նախընտրելի է համարում այդ դասակարգումը կոչել «պատմական (կամ պատմա-հասարակական)»¹¹), առհասարակ՝ պատմահամեմատական լեզվաբանության նվաճումներին: Թեպետև «նախալեզու» տերմինը չի գործածում, սակայն ընդունում է ցեղակից ձևերի համեմատության միջոցով լեզվական ավելի հին՝ գրավոր չվկայված ձևերը վերականգնելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, սակայն, համեմատական մեթոդի («կոմպարատիվիզմի»), հետևաբար նաև համեմատական լեզվաբանության թերությունն է համարում, որ այն, ուշադրությունը սևեռելով լեզուների միջև նկատված ընդհանրությունների վրա, անտեսում է նրանց միջև առկա տարբերությունները¹²:

2) Գ. Ղափանցյանն ընդունում է երիտքերականների առաջ քաշած հնչյունական օրենքների («հնչյունափոխական օրենքների») գաղափարը, սակայն՝ սոցիոլոգիական ուղղության ներկայացուցիչների խմբագրումով: Հայտնի է, որ երիտքերականները, որոնց պատկանում է հնչյունական օրենքի գաղափարը, մեծ նշանակություն են տվել այդ օրենքներին խստորեն հետևելուն (հմմտ. «Միայն նա, որը խստորեն հաշվի է առնում հնչյունական օրենքների գործունեությունը, որոնց ըմբռնման վրա կառուցվում է մեր ամբողջ գիտությունը, իր ուսումնասիրություններում գտնվում է ամուր հիմքի վրա»¹³): Նրանք պաշտպանում էին հնչյունական օրենքների բացարձակության դրույթը: Օր. Հ. Օստոֆի կարծիքով, հնչյունական օրենքները «գործում են կուրորեն, կույր անհրաժեշտությամբ»¹⁴: Ա. Մեյեն՝ սոցիոլոգիական ուղղության Փարիզի դպրոցի ղեկավարը, նախընտրում է «հնչյունական օրենք» ձևակերպման փոխարեն գործածել «հնչյունական համապատասխանությունների կանոնավորություն» արտահայտությունը (հմմտ. «Ինչը սովորաբար կոչվում է «հնչյունական օրենք», դա ... միայն կանոնավոր համապատասխանության բանաձև է կա՛մ երկու հաջորդական ձևերի միջև, կա՛մ միևնույն լեզվի երկու բարբառների միջև»¹⁵): Իսկ, օր., այդ

¹¹ Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 271:

¹² Տե՛ս նույն տեղը, էջ 14, * ծնթգր.:

¹³ **Օստոֆ Գ. և Բրյուգման Կ.** Предисловие к книге «Морфологические исследования в области индоевропейских языков»// **Звегинцев В. А.** История языкознания XIX-XX веков в очерках и извлечениях, ч. I, М., 1964, с. 194-195.

¹⁴ **Вандриес Ж.** նշվ. աշխ., էջ 51, ծնթգր. 2:

¹⁵ **Мейе А.** նշվ. աշխ., էջ 64: Ուշագրավ է, որ հնչյունական օրենքի՝ Ա. Մեյեի ըմբռնմանը համահունչ պատկերացում է արտահայտել երիտքերականների տեսաբան Հ. Պատուրը. «Հնչյունական օրենքը չի պարունակում ցուցումներ այն մասին, թե հատկապես ինչ պիտի տեղի ունենա ամեն անգամ այդ ընդհանուր պայմանների դեպքում, այն սահմանում է միայն պատմական երևույթների որոշակի խմբի կանոնավորությունը» (**Գ. Пауль**, Принципы истории языка, М., 1960, с. 87):

դպրոցի մեկ այլ ներկայացուցչի՝ ժ. Վանդրիեսի կարծիքով, «հնչյունական օրենքը գործունեության պատճառ չէ»¹⁶, հնչյունական օրենքները «բանաձևեր են, որոնք արտահայտում են գործընթացի ամփոփումը, դրանք համապատասխանությունների սկզբունքներ են»¹⁷: Ըստ էության, նույն տեսակետն էր արտահայտել նաև սոցիոլոգիական ուղղության ժնևի դպրոցի հիմնադիրը՝ Ֆ. դը Սոսյուրը. «Օրենքի մասին կարելի է խոսել միայն այն ժամանակ, երբ իրողությունների ամբողջությունը ենթարկվում է նույն կանոնին [իմա՝ երբ չկան բացառություններ՝ Վ. Պ.], իսկ տարածամանակյա իրադարձությունները, չնայած հակառակ տպավորությանը, միշտ պատահական և մասնավոր բնույթ են ունենում»¹⁸:

3) Պատմահամեմատական լեզվաբանության ներկայացուցիչներից շատերը թերահավատությամբ էին վերաբերվում լեզուների ձևաբանական դասակարգմանը: Օր.՝ Ա. Մեյեն այդ դասակարգումը համարել է ոչ գիտական: Նույնիսկ Է. Մեյլիի կոնցեպտուալ դասակարգման մեջ, որը, անշուշտ, առաջընթաց քայլ էր նախորդող տիպաբանական դասակարգումների համեմատությամբ, ոչ բոլոր լեզուներն էին «հարմարավետ» տեղավորվում: Ձևաբանական դասակարգումը, պատկերավոր ասած, ջուր էր լցնում Ն. Մառի առաջարկած՝ լեզուների «ստադիալ» զարգացման ջրաղացին, ըստ որի՝ լեզվական երեք (չորս) տիպերը արտացոլում են լեզուների զարգացման հաջորդական փուլերը անկատարից (անջատական)՝ կցականության միջանկյալ օղակով դեպի կատարյալը (թեքական) աստիճանական անցումով: Ըստ Գ. Ղափանցյանի՝ կոպիտ սխալ է լեզվական կառուցատիպերը հասարակական-տնտեսական կացութաձևերի հաջորդականության հետ կապելը, որովհետև լեզուների պատմությունը հարուստ է միանգամայն այլ վկայություններով¹⁹: Այս առումով Գ. Ղափանցյանը համամիտ է ռուս լեզվաբաններ Դ. Ուշակովին և Ա. Տոմսոնին, որոնց կարծիքով, ձևաբանական դասակարգման առկա վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց (հմտ. «Լեզուների ձևաբանական տիպերի գնահատականը (յեթե ընդհանրապես այդ հնարավոր է անել) առայժմ սոսկ նկարագրականից այն կողմը չի անցնում»²⁰):

Գ. Ղափանցյանը քննել է ընդհանուր լեզվաբանական հիմնահարցերի բավականին լայն շրջանակ, սակայն, նրա գրքում ոչ բոլոր հարցերն են անհրաժեշտ ուշադրության արժանացել: Օր.՝ լեզվի նշանային բնույթի հարցադրումին նա թռուցիկ անդրադառնում է միայն լեզվի և մտածողության խնդրի փոխհարաբերության առնչությամբ, այն դեպ-

¹⁶ Вандриес Ж., նշվ. աշխ., էջ 51:

¹⁷ Նույն տեղում, էջ 52:

¹⁸ **Ֆերդինանդ դը Սոսյուր**, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Եր., 2008, էջ 144-145:

¹⁹ Տե՛ս Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 281:

²⁰ Նույն տեղում:

քում, երբ այլ հիմնախնդիրների քննությունից նկատելի է, որ Ֆ. դը Մոսյուրի «Ընդհանուր լեզվաբանության դասընթացը», ուր առաջին անգամ հստակորեն ձևակերպվել է այդ գաղափարը, Գ. Ղափանցյանի կողմից նկատի առնված գրքերից մեկն է (վերջին առումով «Դասընթացը» զիջում է թերևս Ա. Տոմսոնի «Ընդհանուր լեզվաբանություն» և Է. Սեյիրի «Լեզու» գրքերին): Այնինչ, լեզվական նշանի հասկացությունը հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսի տեսական լեզվաբանության առանցքային հարցադրումներից էր: Այս իրողությունը, մեր կարծիքով, բացատրվում է նրանով, որ Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանության» ստեղծման շրջանում այդ գաղափարը դեռևս լայն ճանաչում չունեի լեզվաբանական շրջանակներում, մասնավորապես՝ խորհրդային լեզվաբանության մեջ:

Գ. Ղափանցյանն առաջինն է հայ լեզվաբանության մեջ կիրառել *հնչույթի* և *ձևույթի* հասկացությունները, իհարկե, ինչպես նկատել է Է. Աղայանը, գործածելով դրանց միջազգային անվանումները՝ *ֆոնեմա* (phonema) և *մորֆեմա* (morphema)²¹: Հնչույթի բնորոշման հարցում նա հիմնականում հետևել է Բոդուեն դը Կուրտենեի հոգեբանական տեսությանը: Ըստ Գ. Ղափանցյանի՝ առանձին հնչյունը խոսողի համար կարևոր է միայն այնքանով, որքանով, «իբրև վերլուծելի առարկա (ոբյեկտ)», «նա կազմում է լեզվի հասարակական գիտակցման մեջ անհրաժեշտ և նշանակալի տարր և մեր հոգեկանության մեջ մի ամբողջություն, այսինքն՝ վորչափով մենք ունենք նրա ամբողջական պարտադիր պատկերացումը-հիշողությունը»²²: Անվանի գիտնականի հնչույթաբանական ըմբռնման համար էական նշանակություն ունի այն հանգամանքը, որ նա հնչույթը բնորոշել է որպես բառի «հնչյունական արտաքինը» ձևավորող «բովանդականիշ կամ ֆունկցիանիշ էլեմենտ», այսինքն՝ *իբրև իմաստաբաղադրիչ գործառույթ իրականացնող միավոր*²³: Հնչույթի այս բնութագիրը, թեպետև սաղմնային վիճակում, քայլ է դեպի նրա գործառական ըմբռնումը, որը 1930-ականներին մշակվում էր Պրահայի լեզվաբանական խմբակի ներկայացուցիչների աշխատություններում, սակայն որևէ հիմք չկա ասելու, թե Գ. Ղափանցյանը ծանոթ էր նրանց ուսմունքին: Հատկապես եթե նկատի ունենանք, որ գործառական հնչույթաբանության հիմնարար աշխատությունը՝ Ն. Ս. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքները», ևս լույս է տեսել 1939-ին, ինչպես և Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը»: Ուշագրավ է, որ Տրուբեցկոյը նույնպես վաղ շրջանում (1930-ականներին) հետևել է հնչույթի հոգեբանական ըմբռնմանը, իսկ գործառական ըմբռնման գաղափարին հանգել է ավելի ուշ: Գ. Ղափանցյանը ևս, ինչպես և Բոդուենը, տարբերակել է լեզվական հնչյունի

²¹ Տե՛ս Է. Բ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 2, Եր., 1962, էջ 215-217:

²² Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 43:

²³ Նույն տեղում, էջ 287:

(իմա՝ հնչույթի) երեք կողմ՝ *բնագիտական* (հնչյունը որպես ֆիզիկաբնախոսական բաղադրիչ), *հոգեկան* (հնչյունը որպես «պատկերացում-հիշողություն», այն է՝ որպես հնչույթ, առանց որի հնարավոր չէ հնչունի արտասանությունը), *սոցիալ-պատմական* (հնչյունը որպես պատմականորեն ձևավորված որոշակի հասարակական իրողություն, որով ապահովվում է կապը միևնույն հասարակության անհատների միջև)²⁴: Գ. Ղափանցյանն արել է առերևույթ սուկ տերմինաբանական բնույթի, իրականում, սակայն, բովանդակային նշանակություն ունեցող մի կարևոր դիտարկում. նա արդարացիորեն սխալ է համարել *հնչաբանություն* տերմինի գործածությունը *ֆոնետիկայի* նշանակությամբ, որովհետև ֆոնետիկան ուսումնասիրում է ոչ թե «հնչելու ուսմունքը», այլ «հնչունի ուսմունքը»: Հետևաբար ֆոնետիկան *հնչունաբանությունն* է²⁵: Իսկ *հնչաբանությունը*, ըստ անվանի լեզվաբանի, ֆոնոլոգիան է, ֆոնացիան²⁶: Եթե *ֆոնետիկա-հնչունաբանություն* հարաբերակցության հարցում Գ. Ղափանցյանի կարծիքը քննություն բռնեց նաև հետագայում, ապա *հնչաբանություն-ֆոնոլոգիա // ֆոնացիա* առնչությունների հարցում իրականությունը փոքր-ինչ այլ է. «հնչաբանությունը» *ֆոնետիկա* տերմինի համարժեքն է, որը ամերիկյան դեսկրիպտիվ լեզվաբանության որոշ ներկայացուցիչներ (օր. Թրեյջերը) գործածել են *ֆոնոլոգիայի* (=հնչույթաբանության) նշանակությամբ, բայց ոչ՝ *ֆոնացիայի*²⁷: Իսկ, օր., Գ. Ջահուկյանը այդ տերմինը գործածել է հնչունաբանությունը և հնչույթաբանությունը միավորող գիտակարգի նշանակությամբ²⁸:

Իր «Ընդհանուր լեզվաբանության» մեջ Գ. Ղափանցյանն արդեն իսկ տվել է *մորֆեմա-ձևույթի* ամբողջական բնութագիրը՝ տարբերակելով երեք տեսակ՝ 1) «հիմնական մորֆեմա» կամ «հիմնական ձև» («ձևաբանական և իմաստական տեսակետով ... անբաժանելի մասը», որը արտահայտում է «ընդհանուր և հիմնական գաղափար»²⁹), 2) «բառաստեղծական» կամ «բառակազմության» երկրորդական ձև («ցույց է տալիս վորոշ սահմանագծում այդ հիմնական գաղափարի համար, նրա սահմանորոշումը կամ կոնկրետավորումը ըստ նոր իմաստի»³⁰), 3) «բառահարաբերության երկրորդական ձև» («ցույց է տալիս բառի

²⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 44: Հմմտ. **И. А. Бодуэн де Куртэнэ**, Избранные труды по общему языкознанию, т. I, М., 1963, էջ 354-355:

²⁵ Նա առավել ևս սխալ է համարել *ֆոնետիկայի* նշանակությամբ *ձայնախոսություն* տերմինի գործածումը, որը, ըստ ամենայնի, վերաբերում է Հ. Աճառյանին (տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971):

²⁶ Տե՛ս **Գր. Ղափանցյան**, նշվ. աշխ., էջ 43:

²⁷ Տե՛ս **Эрик Хемп**, Словарь американской лингвистической терминологии, М., 1964, էջ 237-238:

²⁸ Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 57-95:

²⁹ **Գր. Ղափանցյան**, նշվ. աշխ., էջ 210:

³⁰ Նույն տեղում:

հարաբերությունը կամ կապը նախադասության մեջ այս կամ այն բառի հետ, մատնանշում է բառի այսպես ասած շարահյուսական դերը (ֆունկցիան), բառի կապական հարաբերությունները»³¹):

Գ. Ղափանցյանի քերականական պատկեացումների ինքնատիպ դրսևորումներից է *ձևաբանության* ըմբռնումը լայն և նեղ նշանակություններով՝ իբրև բառաձևերի ուսմունքի և իբրև *քերականության* համարժեք՝ ներառելով շարահյուսությունը: Շարահյուսության առանձնացումը ձևաբանությունից պայմանավորված է մեթոդական և գործնական նկատառումներով: Ձևաբանության ըմբռնումը լայն և նեղ իմաստներով դիտարկվում է *ընդհանուրի* և *մասնավորի* հարաբերակցության համատեքստում: Եթե նեղ իմաստով ձևաբանությունը բառաձևերի ուսմունքն է (մասնավորը), ապա լայն իմաստով այն բառերի և բառաձևերի՝ մի նախադասության մեջ կապակցության ուսմունքն է (ընդհանուրը): Լեզվական մտածողության ամենախոշոր միավորների՝ բառերի «պրակտիկան ու կյանքը տրվում են միմիայն բարդ և կապակցված խոսսային շարադրման մեջ. դրանց պրակտիկան իրենց «սինտագմատիկայումն» է...»³²:

Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանության» այս ուրվագծային քննությունն իսկ հիմք է տալիս ասելու, որ 1) լեզվի տեսության հարցերում նա իր ժամանակի առաջադեմ մտածողներից էր, այն լեզվաբաններից, ովքեր ոչ միայն վերապահությամբ են վերաբերվել *«նոր ուսմունքի»* սկզբունքներին, այլև քննադատական մոտեցմամբ տեղ են տվել նաև լեզվաբանական այլ ուղղությունների առաջարկած արժեքավոր գաղափարներին. 2) թեպետև լեզվի և մտածողության, լեզվաբանության որպես գիտակարգի խնդիրների, լեզվի ծագման և որոշ այլ հարցերում նա լիովին չի հաղթահարել *«նոր ուսմունքի»* խոցելի կողմերը (որի պատճառը, մեր կարծիքով, այսպես կոչված *մարքսիստական լեզվաբանություն* ստեղծելու փորձերին տուրք տալն էր), բայց և այնպես եղել է այն ոչ մեծաթիվ գիտնականներից մեկը, որոնք նաև անհաշտ դիրքորոշում են որդեգրել *նորուսմունքականների* ծայրահեղ, ոչ գիտական դրույթների հանդեպ, այլ կերպ ասած՝ իրական պայքար մղել հանուն ճշմարիտ գիտության. 3) Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանությունը» ոչ միայն ժամանակի հայ լեզվաբանական մտքի նվաճումներից էր, այլև նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ստեղծված նմանօրինակ արժեքավոր աշխատություններից մեկը. այն ավելին էր, քան պարզապես դասագիրքը: Ըստ էության, Գ. Ղափանցյանի այդ գրքով հայ լեզվաբանության մեջ դրվեցին *ընդհանուր լեզվաբանության* որպես գիտակարգի հիմքերը:

³¹ Նույն տեղում, էջ 211:

³² Նույն տեղում, էջ 286:

Բանալի բառեր - լեզու և մտածողություն, «նորուսունքական», ֆունեմա, մորֆեմա, հնչարանություն և հնչյունարանություն, ձևարանության լայն և նեղ ըմբռնումներ

ВАРДАН ПЕТРОСЯН – Г. Капанцян – теоретик общего языкознания. – Языковедческие взгляды Г. Капанцяна претерпели сложное эволюционное развитие. В вопросах теории языка он пытался уравновесить, с одной стороны, традиционные представления (младogramматические, социологические и т.д.), с другой – представления “нового учения о языке”. Это не всегда ему удавалось, поскольку ситуация в советской науке не способствовала созданию истинных ценностей. Г. Капанцян, по сути, заложил в армянской филологии основы общего языкознания как особой дисциплины, в частности, первым ввёл понятия фонемы и морфемы.

Ключевые слова: язык и мышление, фонема, морфема, фонематика и фонетика, широкое и узкое морфологическое восприятие

VARDAN PETROSYAN – G. Ghapantsyan as a Theorist of General Linguistics. – G. Ghapantsyan’s general linguistic viewpoints have been formulated by means of complicated reformative developments. In essence, dealing with the questions of linguistic theory, he tried to balance on the one hand the traditional linguistic directions (Young Grammarians’ doctrines, sociological doctrines, etc.) and on the other hand- the images of “new-doctrinal” linguistic ideas - taking only the most prominent concepts from these two doctrines. Of course, he did not always manage to do it, because the reality the representative of which was him was not convenient for truthful scientific values. In Armenian linguistics, it was G. Ghapantsyan, who first introduced the notions of *phoneme* and *morpheme*. With his “General Linguistics”, general linguistics was set in as a scientific discipline in Armenian linguistics.

Key words: language and thinking, “new-doctrinal”, phoneme, morpheme, phonematics and phonetics, wide and narrow perceptions of morphology